նական երբեմն դանդաղ, երբեմն սուր շարժումներ ալ չլինէին դէպի Սալմաստ, այդ գաւառի հայ բնակչութիւնը նուազելու վախին կրնար ենթարկուիլ։

Վերև յիշուած 8957 անձերը հետևեալ կերպով կը բաշխուին.

	Արական սեռ.	Իգական սեռ.
Ամուսնացածներ . . .	2,012	2,535
1—7 տարեկան զաւակներ .	1,184	1,083
8—14 « » .	780	505
15-էն վեր ամուրի . . .	780	78
	4,756	4,201
Երկու կազմի գումարը .	8,957.	

Այս ցուցակէն կը տեսնուի, որ

Ա՝ կանայք էրիկ մարդերէն (ամուսնացածներ) 523 թուի աւելորդ մ՝ունին. դա կը նշանակէ որ կանանց 100-ին 20-ը այրի մնացած է. մի բան որ հետևանք է գլխաւորապէս էրիկների՝ պանդխտութեան մէջ աւելի շատ ոչնչանալուն։

Բ՝ 16-էն վեր ամուրի կանանց այսինքն աղջիկների թիւը անհամեմատ փոքր է մանչերի թուէն, մէկ տասներորդը կը կազմէ. այդ բանի պատճառն ալ այն է որ Սալմաստի մէջ, աղջիկները սովորապէս 12—13 տարեկան աղջիկը կամուսնացուներն. երբ աղջիկը 13 տարին անցուներ, այ հասակը անցուցած կը համարեն։ Միայն այս վերջերս Ատրպատականի հոգևոր իշխանութիւնը սկսեց խիստ միջոցներ ձեռք առնել կանխահաս ամուսնութիւններ արգելելու։ Մանչերի ամուսնութեան սովորական որոշ տարիք չկայ, 16 տարեկանէն կը սկսին ամուսնացուներ, յաճախ կը պատահի 25—30 տարեկան այր մարդուն 12—13 տարեկան աղջկան հետ ամուսնանալը։

Գ՝ Սալմաստի մէջ արական ծնունդներ աւելի են. վերի վիճակագրէն կը տեսնուի որ հակառակ նոյն իսկ այր մարդկանց շատ մեռնելուն, նորէն այր մարդկանց թիւը կին մարդոց թուէն 13 % առաւելութիւն ունի։

Բ. ՏԱՃԿԱՀԱՅՔ.

Վ. Պօլսի լրագիրներուն ցաւօք կարդացինք Սամաթիոյ մէջ պատահած մի մեծ հրդեհի նկարագրութիւնն. բնակարանաց փայտեայ և խիտ առ խիտ լինիլն, որպէս և ջրոյ նուազութիւնն հրդեհին ծաւալ ստանալուն պատճառ են եղել. այրուել են 178 տներ և մի քանի խանութներ։

Սամաթիա Պօլսոյ հայաշատ թաղերից մինն է, ուստի դիւրին է մակաբերել թէ փնասուողների մեծագոյն մասը հայերն են, 170 տուն, որոց մէջ բնակուումէին 1,500—1,600 է աւելի անձինք, դժբաղդաբար չբաւոր դասակարգից, որք այժմ գտնուումեն խիստ դառն կացութեան մէջ։

Ուրախալի է տեսնել որ իսկոյն նպաստամատոյց յանձնաժողով կազմուել է թաղին քարոզիչ Գեր. Հրմայեակ եպիսկոպոսի նախագահութեամբ, արկածելոց համար նպաստ հաւաքելու։ Պատրիարք Սրբազանն, որ հակառակ իւր անձնական տկարութեան անձամբ գնացել է հրդեհի վայրը մխիթարելու իւր հօտին, վեց օսմանեան ոսկւոյ մի նուէր ևս արել է. Նորին Բարձր Սրբազնութեան օրինակին հետևել են և ուրիշներն, իւրաքանչիւրն չինայելով իւր լումայն. ի մասնաւորի Էսաեան եղբարք 10,000 ղրուշ նպաստ ուղարկել են։

Երկրին վեհապետը ևս 1,000 օսմ. ոսկի նուիրել է և այդ գումարը մի թիկնապահի միջոցաւ բաշխուել է արկածելոց։

Ուրախութեամբ իմացանք որ Կ. Պօլսոյ առաջնակարգ վաճառականներից Պատրիկ էֆ. Կիւլպենկեան յանձն առել է 700 ոսկւոյ չափ ծախս անելով ի հիմանց նորոգել Ազգային հիւանդանոցի մօտ Ս. Յակոբայ վանքն և յարակից շէնքերն, որտեղ և պիտի փոխադրուի Որբանոցն, որ ծանօթ է իւր եկեղեցասէր և բարեպաշտ զգացումներով. Պատրիկ էֆ. որդին է հանգուցեալ Սերովբէ էֆ. Կիւլպենկեանի, որոյ բարերարութիւնները թէ առ Հիւանդանոցն և թէ առ այլ ազգ. հաստատութիւնս յայտնի են արդէն։

Տիգրանակերտի վիճակին առաջնորդական տեղապահ կարգուել է Երուսաղէմայ միաբան Արժ. Եղեկիել վարդապետն, որ մեկնել է արդէն դէպ ի նոր պաշտօնատեղին։

Նախորդ համարով յիշուած Արժ. Տեղապահաց ևս ի մօտոյ Իւրեանց վիճակներն ուղևորիլն սպասում ենք։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. ԿԱՏԱՐԵԱԼ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ . Կ. Վարդ. . 145
2. ՄԻ ՀԱՏՈՒԱԾ ՈՐՈԳԵՆԻՍԻ . Կ. Վ. . . 146
3. ՈՐՈԳԵՆԻՍԻ ԱՍԱՑԵԱԼ.. 149
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 150
5. ԲՈՂՈՔԱԿԱՆ ՔԱՐՈԶԻՉՆԵՐ. . Կ. Վ. . . 151

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

6. ԵՐԱՇԽԻՔ (Թարգմ. Շիլլերից) Յ. Յովհաննիսեան 153
7. ՆԵՍՏՈՐԱԿԱՆ ԵԿԵՂ. (Թարգմ.) Ն. Քարամեան . 155
8. ԱՌԱԾՆԵՐ ՎԱՆԱՑ ԲԱՐԲԱՌՈՎ. Ս. Հայկունի . 164

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ.

9. ՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ . Վանական . . 162
10. ՆՈՐ ՆԱԽԻՋ. ՈՒՍՈՒՄՆ. ԳՈՐԾԸ (վերջ) Ն. Շ. . 165
11. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ 169
12. ՍԱՐԴԸ . . (Թարգմ.) . Զ. Յ. . . 171

ԱԶԳԱՅԻՆ.

13. ՄԱՄՈՒԼ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ . . . . . .
14. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . . 178
ՄԱՅՐ ԱԹՈՌ.. . . . . .
1. ՌՈՒՍԱՀԱՅՔ . . . . . .
Վրաստանի եւ Իմերէթի թեմ . . . .
2. ՏԱՃԿԱՀԱՅՔ. . . . . .
3. ՊԱՐՍԿԱՀԱՅՔ. . . . . .
Ատրպատականի թեմ (Թղթակցութիւն) Ա .
ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ . . . . . .
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ . . . . . .
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. . . . . .